ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍՈՂՈՅԱՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

Մարտի 30-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.U.O.S.S. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով (տես էջ 25) ամերիկահայ բարերարներ Տեր եւ Տիկին Քարլ /Գալուստ/ եւ Էմմա Սողոյաններին շնորհվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը՝ ի նշան Հայ Առաքելական Եկեղեցուն. հայ ազգին ու մշակույթին մատուցած երկարամյա ծառայությունների գնահատության: Վերջերս Տեր եւ Տիկին Սողոյանները հանձն առան նաեւ հովանավորել Սյունյաց Թեմում՝ Վայքում Ս. Տրդատ անունով օծվելիք եկեղեցու կառուցումը:

Քացման խոսքով հանդես եկավ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, որից հետո Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը հանդիսավորապես ընթերցեց Հայրապետական կոնդակը:

Ապա Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարերարներին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն շքանշանը: Արտահայտելով իր գոհունակությունը եւ գնահատանքը բարերաներին՝ Վեհափառ Հայրապետը նրանց նվիրեց մի հուշանվեր-խաչքար:

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը եւ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ